

**ՀՀ Սյունիքի մարզպետ Վ. Հակոբյանի շնորհավորական ուղերձը
Մարտի 8-ի՝ Կանանց միջազգային տոնի առթիվ**

Սիրելի՛ կանայք,

Իմ ջերմ բարեմաղթանքներն են հղում ձեզ գարնանային զարթոնքի այս գեղեցիկ տոնի՝ Մարտի 8-ի առթիվ: Տոն, որ մեկ անգամ ևս առիթ է ընձեռում ընդգծելու և արժևորելու ձեր կարևոր դերակատարությունը մեր կյանքում: Դուք եք մեր ընտանիքների հիմնասյունն ու պահապանը, և ձեր շնորհիվ է, որ ընտանիքը յուրաքանչյուրիս համար շարունակում է մնալ մոլորակի ամենաջերմ ու հաճելի անկյունը: Դուք եք ամենայն լավի ու բարու, սիրո ու գեղեցկության կրողն ու մարմնավորողը և արժանի՝ բոլորիս անկեղծ խոնարհումին ու գնահատանքին:

Այսօր մեր անկախ պետականության կայացումն ու զարգացումը հնարավոր չէ պատկերացնել առանց ձեր մասնակցության և ձեր ազգանվեր առաքելության: Եվ հենց ձեզանով է առավելապես պայմանավորված վաղվա օրվա հանդեպ մեր հավատն ու վստահությունը:

Վստահ եմ, որ ապագայում էլ հայ կինը շարունակելու է մնալ մեր հարատևման, անմնացորդ նվիրումի խորհրդանիշը:

Սիրով շնորհավորում եմ ձեզ այս հիասքանչ տոնի կապակցությամբ և երախտագիտության, սիրո ու ակնածանքի խոսքեր ուղղում ձեզ, սիրելի՛ կանայք: Եղե՛ք գեղեցիկ ու հմայիչ, սերն ու երջանկությունը թող միշտ լինեն ձեզ ուղեկից:

ՀՀ Սյունիքի մարզպետ



Վ. Հակոբյան

7 մարտ 2014թ.